ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասաժամերին

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Անուշ Սարգիսջանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գորիսի Յու. Բախշյանի անվ. թիվ 3 հիմնական դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

1. Միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում ..... 4

2. Միջառարկայական կապերի հիմնահարցը մանկավարժության ուշադրության կենտրոնում 5

3. Անդրադարձ կապը մայրենիի ուսուցման գործընթացում ..... 8

4. «Մայրենի» առարկայի և «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի կապը ..... 11

5. Միջառարկայական կապերի միջոցով հայրենասիրության ու բարոյական մյուս արժեքների ձևավորումը մայրենիի դասաժամերին ..... 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 17

Գրականության ցանկ ..... 18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում կրթական բարեփոխումները ժամանակի հրամայականով անդրադառնում են կրթության բնագավառի կառուցվածքային բոլոր օղակներին ու կողմերին: Վերջին ժամանակներում զգալի աշխատանք է կատարվել դպրոցում դասին ներկայացվող ժամանակակից պահանջները փոփոխելու, ուսուցման գործընթացում նոր ու արդյունավետ մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Ավելի հաճախ են կազմակերպվում դասապրոցեսներ, որտեղ համակցվում են ուսուցման արդյունավետ մեթոդներ, և գործադրվում են նոր ու արդյունավետ հնարներ, որոնք մեծապես նպաստում են ուսումնական խնդիրների կենսագործմանը և առաջին պլան են մղում դասապրոցեսի առաջնակարգ պահանջները: Այդ ընթացքում ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև միջառարկայական կապերի ապահովման, մեթոդական հանձնարարականների կատարման, ուսումնական տեղեկության հաղորդման, գրավիչ մուտքի ապահովման հարցերը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ձևերի ու միջոցների ընդհանուր համակարգում իրենց ուրույն տեղն ունեցող միջառարկայական կապերի դերը վերջին տարիներին էլ ավելի է գրավում մեր տեսաբան ու գործնական մանկավարժների ուշադրությունը: Պատճառն այն է, որ այդ կապերի բացահայտումն ու ապահովումը նպաստում են աշակերտների ստեղծագործական հնարավորությունների զարգացմանը, նրանց մտավոր գործունեության ակտիվացմանը և բանավոր ու գրավոր խոսքի կատարելագործմանը: Ուստի տեսական և գործնական ահա այս նշանակություններով էլ պայմանավորված է խնդրի ուսումնասիրման **արդիականությունը**:

**Աշխատանքի նպատակն** է տեսականորեն հիմնավորել միջառարկայական կապերի դերը՝ որպես ուսուցման մատչելիության, դասի արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման:

Նպատակից ելնելով՝ **առանձնացրել ենք հետևյալ խնդիրները՝**

- **ցույց տալ** միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում,
- **անդրադառնալ** մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցի ձևավորման և զարգացման պատմությանը,

- **բացահայտել** միջառարկայական կապերի երևույթների բազմաստիճան լինելը,
- **ցույց տալ** «Արվեստ և արհեստ» առարկայախմբի, ինչպես նաև այլ առարկաների տարբեր տարրերի օգտագործման անհրաժեշտությունը մայրենիի դասաժամերին՝ բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու համար:

**Հետազոտության օբյեկտը** միջառարկայական կապերի առանձնահատկություններն են ուսուցման գործընթացում:

**Հետազոտության առարկան** հայոց լեզվի ու գրականության և «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի, ինչպես նաև այլ առարկաների միջև կապերի բացահայտումն ու «Մայրենի» առարկայի դասերին դրանց ապահովումն է:

Հետազոտության մեջ օգտագործվել են դիտարկման և վերլուծության **մեթոդները**:

## 1. Միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում

Միջառարկայական կապերի դիդակտիկ երևույթը՝ որպես համակարգ, ունի կառուցվածք՝ բաղկացած երեք տարրերից.

1. գիտելիքներ (կարողություններ)՝ մեկ առարկայի բնագավառից,
2. գիտելիքներ (կարողություններ)՝ ուրիշ առարկայական բնագավառներից,
3. այդ գիտելիքների (կարողությունների)՝ կապը ուսուցման գործընթացում:

Կապերը ընդգրկում են ուսուցման առարկայական տարբեր բնագավառներ՝ հասարակական, բնական, տեխնիկական գիտություններ: Գիտելիքների միավորումը (սինթեզի շնորհիվ) յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կատարում է ճանաչողական որոշակի գործառույթ՝ համընդհանուր օբյեկտների միջև պատճառահետևանքային կապերի բացահայտում, ընդհանրացում և նոր՝ առավել ընդհանրական գիտելիքների դուրս բերում, ընդհանուր հասկացությունների կոնկրետացում, կից երևույթների դասակարգում, ընդհանրացված գաղափարների ապացուցում և այլն:

Միջառարկայական կապը՝ տրամաբանորեն ավարտուն ձևով, համընդհանուր արտահայտված գիտակցական առնչություն է, հարաբերություն՝ ուսումնական տարբեր առարկաների կառուցվածքային տարրերի միջև:

Այդպիսի առնչություն կարող է լինել նոր գիտելիքը, որը ձևավորվել է տարբեր առարկաների միջև եղած կապերի յուրացման շնորհիվ:

Այդպիսի առնչություն կարող է լինել նաև ընդհանրացված նոր կարողությունը, որը ձևավորվել է ուսումնական ճանաչողական գործունեության եղանակների միջև կապերի յուրացման արդյունքում, որոնք կիրառվում են տարբեր առարկաներում: Նոր կարողությունը միջառարկայական է, քանի որ սովորողներն այն կարող են օգտագործել ուսումնական տարբեր առարկաների ընթացքում (օրինակ, բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունը):

Այդպիսի հարաբերություններ կարող են լինել նաև նոր՝ միջառարկայական հիմքի վրա ընդհանրացված գիտությունների արժեքավոր տեսակետները, որոնք ձևավորում են աշակերտի գաղափարաբարոյական գիտակցությունը:

Միջառարկայական գիտելիքների, կարողությունների և էական առնչությունների ձևավորման արդյունավետությունը աշակերտների շրջանում որոշվում է ուսուցման գործընթացում նրանց՝ միջառարկայական կապեր ապահովելու կարողությամբ:

Որպես արդյունք՝ միջառարկայական բազմակողմանի կապերի ապահովմամբ մշակվում է ուսուցչի գործունեության ռազմավարությունը:

## 2. Միջառարկայական կապերի հիմնահարցը մանկավարժության ուշադրության կենտրոնում

Միջառարկայական կապերի հիմնահարցը նոր չէ. սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն նույնքան հին է, որքան առարկայական ուսուցումը: Այլ բան է, թե տարբեր ժամանակներում ինչ տեսանկյունով է քննարկվել այդ հիմնահարցը կամ ինչ նպատակով են օգտագործվել միջառարկայական կապերը:

Դասական մանկավարժության մեջ միջառարկայական կապերի գաղափարը ծնվեց ուսումնական նյութի բովանդակության մեջ բնության ամբողջականությունը արտացոլելու ուղիների որոնման ընթացքում:

Դեռևս 1657 թ. իր աշխատություններում չեխ մեծ մանկավարժ ու հումանիստ, հասարակական գործիչ Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկական առումով անդրադարձել է միջառարկայական կապերին, նշել, որ բնության մեջ առարկաներն ու երևույթները փոխադարձ կապերի մեջ են. «Այն ամենը, ինչ գտնվում է փոխադարձ

կապի մեջ, պետք է ուսուցանվի հենց այդ կապերի հետ փոխկապակցված ձևով»,- նշել է Կոմենսկին [2, 87]: Հենց այս գիտակցումով էլ Կոմենսկին գնաց դեպի գիտելիքների բազմակողմանի ընդհանրացումը, առանց որի անհնար է պատճառահետևանքային կապերի գիտակցումը և օբյեկտիվ աշխարհի իրերի ու երևույթների հարաբերությունները ընկալել: Կոմենսկին հասկանում էր, թե որքան կարևոր է ստեղծել կապեր ուսումնական առարկաների միջև, որպեսզի սովորողների մոտ ձևավորվեն գիտելիքների համակարգեր և ապահովվի ուսուցման գործընթացի ամբողջությունը:

Այս գաղափարին են անդրադարձել հետագայում շատ մանկավարժներ, զարգացրել և հարստացրել այն:

Այսպես՝ գիտելիքների ընդհանրացման գաղափարը որպես «ճշմարտությունը գտնելու» մեթոդ Ջոն Լոկի մոտ զուգակցվում է կրթության բովանդակության որոշմանը, որում մի առարկան, նրա հաստատմամբ, պետք է ամբողջացվի մյուսի տարրերով ու փաստերով:

Միջառարկայական կապերի խնդիրը հոգեբանորեն հիմնավորելու առաջին փորձը կատարեց գերմանացի հոգեբան-մանկավարժ Ի.Ֆ. Հերբարտը: Նա գտնում էր, որ բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու համար պետք է հաճախակի դիմել տարբեր գիտությունների և ուսումնական առարկաների միջև առկա կապերին, որը միաժամանակ կզարգացնի աշակերտների հետաքրքրությունները:

Միջառարկայական կապերի հիմնահարցը դիդակտիկական առումով իր գիտամանակավարժական հիմնավորումը գտավ գերմանացի ականավոր մանկավարժ Ա. Դիստերվեգի աշխատություններում: Ինքը՝Դիստերվեգը, գրում էր, որ իր «Ձեռնարկ՝ դպրոցական քրեստոմատիկայից օգտվելու համար» գրքի հիմքում դրված է միջառարկայական կապերից արդյունավետ օգտվելու գաղափարը: Նա առանձնապես շեշտում է մայրենի լեզվի միջառարկայական կապերի կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը:

Դասական մանկավարժության մեջ միջառարկայական կապերի դիդակտիկական նշանակության առավել ամբողջական հոգեբանամանկավարժական հիմնավորումը տվել է Կ. Դ. Ուշինսկին: Իր դիդակտիկական–մեթոդական աշխատություններում նա միաժամանակ տվել է մի շարք միջառարկայական կապերի

օգտագործման ձևեր ու մեթոդներ: Օրինակ, իր «Մայրենի լեզու» մեթոդական ուղեցույցում նա խորհուրդ է տալիս աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կազմակերպվող զրույցների ժամանակ հաճախակի դիմել բնագիտական առարկաներին, քանի որ այդ առարկաները դիտողական են և գտնվում են փոխադարձ կապերի մեջ: Ուշինսկին մեծ ավանդ է ունեցել նաև միջառարկայական կապերի մեթոդական մշակման մեջ, ինչով զբաղվել են շատ մանկավարժներ: Մեթոդական պահանջների շարքում առավել գործուն են հետևյալները՝ «….այլ առարկաների գիտելիքների վրա հենվելը նյութը բացատրելիս, կրկնության ժամանակ առանձին բաժինների բովանդակությունների հաջորդականություն, մի շարք առարկաների համար ընդհանուր գիտական մտքերի ու ճանաչողական կարողությունների զարգացում» [6, 26]:

Գիտությունների, ուսումնական առարկաների փոխկապակցվածության և դրանց փոխկապակցված ուսուցման մասին արժեքավոր դրույթներ են զարգացրել նաև անցյալի հայ ականավոր մանկավարժները: Օրինակ, Խաչատուր Աբովյանը իր մանկավարժական աշխատություններում բազմիցս խոսում է մի շարք առարկաների միջև առկա կապերի ու դրանց օգտագործման մասին: Նախ նշենք, որ Աբովյանն էլ Դիստերվեգի նման դեմ էր տարբեր գիտությունները և ուսումնական առարկաները համատեղ, միևնույն դասաժամին անցնելու ունիվերսալ մեթոդին: Այդ սկզբունքով էլ մանկավարժական պրակտիկայում Աբովյանը խելամտորեն օգտագործում է հայոց լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության, բնագիտության և մյուս առարկաների միջև առկա կապերը:

Բարձր գնահատելով լեզուների դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի դերը, Աբովյանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հատկապես մայրենի լեզվի և ռուսաց լեզվի դասավանդման համեմատական մեթոդին, որի ժամանակ «փորձված ուսուցիչը ի մի բերելով երկու լեզուների միատեսակ կանոնները և ընդհանուր հատկությունները, կրկնակի հեշտացնում է իր աշակերտների աշխատանքը և նրանց արագ քայլերով տանում դեպի երկու լեզուների ուսումնասիրությունը»:

## 3. Անդրադարձ կապը մայրենիի ուսուցման գործընթացում

Շրջապատի աշխարհը մարդուն ներկայանում է իր դիալեկտիկական միասնության մեջ, փոխադարձ կապերով ու կախվածությամբ, պատճառահետևանքային առնչակցություններով: Ուսումնական գործընթացն աշխարհի ճանաչումն է իր այդ կապերի համար, ու դարերի ընթացքում աշխարհի ճանաչման տարբեր համակարգեր են մշակվել, որոնց մեծ մասի հիմքում ընկած է եղել աշխարհը կամ շրջապատը մաս առ մաս կամ տարբեր կողմերից ճանաչելու սկզբունքը: Առարկայական ուսուցումը դրա լավագույն արտահայտությունն է և մինչև այժմ տիրապետող է ուսուցման գործընթացում:

Սակայն աստիճանաբար ավելի ու ավելի համոզիչ է դառնում այն փաստը, որ աշխարհի ուսումնասիրման ավանդական ձևն իրեն չի արդարացնում, որովհետև բազմաթիվ ու բազմապիսի գործընթացներ ու երևույթներ կան, որոնք անբաժանելի միասնություն են ներկայացնում, և դրանց բաղադրիչների առանձին ու անկախ ուսումնասիրությունը, միևնույնն է, ամբողջության մասին ճիշտ պատկերացում չի տալիս: Վերջին շրջանում առաջացած միջառարկայական կամ սահմանային գիտությունները՝ աստրոֆիզիկան, ֆիզիկական քիմիան, բիոնիկան և այլն, այս նոր սկզբունքի արտահայտությունն են:

Ուսուցման մեջ ևս այդ միասնության կամ փոխադարձ կապերի ապահովման պահանջը գնալով հույժ անհրաժեշտ խնդիր է դառնում, որի հիման վրա էլ ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի ապահովման նոր պահանջ ստեղծվեց: Միջառարկայական կապերի օգտագործումն ունի նաև մի այլ՝ շատ կարևոր նշանակություն. այն վաղուց ստացած կամ արդեն ունեցած գիտելիքների փոխանցման, դրանք շրջանառության մեջ դնելու, տարբեր պայմաններում ճիշտ ու տեղին գործադրելու կարողություն է մշակում սովորողների մեջ, որը մարդու համար կարևոր ու գործնական հատկանիշ է դառնում նրա ամբողջ կյանքի համար:

Գիտելիքների փոխանցման և ներառարկայական կապերի ապահովման տեսակետից հատուկ ուշադրություն պետք է դարձնել միևնույն առարկայի՝ տարբեր տարիների դասընթացների կամ ամբողջական դասընթացի տարբեր հատվածների միջև փոխադարձ կապերի ապահովմանը՝ որպես դասընթացի ամբողջացման,

անցածը հիշելու և նորի հետ կապելու, սովորածը գործադրելու և գործածության ոլորտում պահելու անփոխարինելի միջոցի:

Խոսել դասավանդման գործընթացում ամեն օր ուսումնասիրվող առանձին նյութերի միջև փոխադարձ կապերի ապահովման մեթոդական ձևերի ու եղանակների մասին, նշանակում է կոնկրետ օրինակների վրա ցույց տալ, թե ինչպես, ինչ ձևերով ու հնարներով պետք է իրականացնել անդրադարձ կապի պահանջը, ինչով այն կնպաստի նոր նյութի խորն ու կայուն յուրացմանը, գիտելիքների կուռ ու ամբողջական համակարգ ստեղծելուն կամ ձեռքբերած գիտելիքների հիման վրա աշակերտների մեջ դրանց գործադրման կարողություններ ու հմտություններ մշակելուն: Իսկ այս ամենը միջառարկայական կապերի օգտագործման հիմնական նպատակներից մեկն է, ուստի այդ նշանակում է նաև ցույց տալ, թե նյութերի միջև կայուն կապերի ստեղծումով ինչպես կարելի կլինի հասնել ավելի ընդհանրացված կապերին՝ տարբեր առարկաների միջև եղած փոխադարձ կապերի գիտակցմանն ու օգտագործմանը: Այլ կերպ ասած՝ դրանով ուսուցչին կսովորեցնենք, թե ինչպես ծանոթից, մոտիկից ու կոնկրետից կարելի կլինի անցնել անծանոթին, ավելի հեռավորին ու ընդհանուրին:

Այստեղ հիմնականում կխոսվի մայրենի լեզվի ուսումնասիրման ընթացքում իրականացվող փոխադարձ կապերի մասին միայն, սակայն այն օրինակ կարող է դառնալ նաև այլ առարկաների ուսուցման ընթացքում նման կապերի կենսագործման համար:

Ուսումնասիրվող նյութերի միջև առարկայական տրամաբանական բովանդակության, թեմատիկ, ճանաչողական, դաստիարակչական ու լեզվական կապերի ստեղծման աշխատանքը պետք է սկսել դեռևս մշակման համար ընտրված նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցից և ավարտել նյութի, թեմայի կամ նյութերի թեմատիկ խմբի ամփոփումով, ընթացիկ, կիսամյակային ու տարեվերջյան կրկնություններով, յուրաքանչյուր տեղում՝ իր չափով ու ձևով՝ ըստ անհրաժեշտության ու հնարավորության:

Եթե մեթոդապես արգելվում է զրույցի ընթացքում նոր նյութի բովանդակությանը դիմելը կամ այն ինչ-որ չափով շոշափելը, ապա արդեն ծանոթ նյութերին դիմելը ոչ միայն չի սահմանափակվում, այլև, ընդհակառակը, խրախուսվում է, որովհետև ծանոթ նյութի մասին խոսելիս իսկապես զրույցն ավելի

ակտիվ, երկկողմանի բնույթ է ստանում, դառնում է լիարժեք: Արդեն անցած ու ծանոթ նյութերի օգտագործումը զրույցի ընթացքում աշակերտներին հնարավորություն է տալիս ակտիվորեն մասնակցելու նոր նյութի ուսումնասիրման նախապատրաստմանը, հարցեր տալու, պատասխանելու առաջադրված հարցերին, լրացումներ ու եզրակացություններ անելու, փաստեր ու օրինակներ բերելու, մտնելու ուսումնասիրվող թեմայի ոլորտը, տարբեր կողմերից ծանոթանալու նրան:

Ուսումնասիրվող նյութերի միջև սերտ կապեր ու փոխկապակցություններ ստեղծելու կարևոր ձևերից մեկն էլ ընթացիկ կրկնություններն ու վերհիշումներն են, երբ առանձին-առանձին ուսումնասիրված նյութերը միմյանց հետ կապակցելու, մի ամբողջական կուռ համակարգ ձևավորելու համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում: Անցածի վերհիշումն ու կրկնությունը հնարավորություն են տալիս այդ նյութերի միջև որոշակի հաջորդականություն ստեղծելու երբեմն ժամանակի, երբեմն գիտական համակարգի, երբեմն տրամաբանական կամ մի այլ հիմքով: Անցածի կրկնությունը մե՛րթ պարզ վերհիշման բնույթ է կրում, երբ գործ ունենք ընթացիկ կրկնության հետ, մե՛րթ էլ անցածը համակարգի բերելու, տարբեր նյութերի միջև կապեր ու առնչակցություններ հայտնաբերելու:

Այսպիսի աշխատանքի համար առանձնապես նպաստավոր պայմաններ են ստեղծվում թեմաների ամփոփման կամ ընդհանրացման ժամանակ, երբ թեմայի կամ թեմատիկ խմբի մեջ մտնող առանձին նյութերը միմյանց կապակցելու, դրանք մի ընդհանուր համակարգի մեջ միավորելու աշխատանք է կատարվում: Այս դեպքում միանգամայն դրական աշխատանք կարելի է կատարել հատկապես ընդհանրացնող գծապատկերների, գծային մոդելների, ցուցափեղկերի, ալբոմների ու այլ կարգի ընդհանրացնող նյութերի օգտագործման շնորհիվ, որոնք նյութերի միջև եղած կապերն ու փոխակապակցությունները ցույց են տալիս գրաֆիկական հատուկ միջոցներով կամ բովանդակությունը ներկայացնող նկարներով ու պաստառներով:

Ամենևին պատահական չէ, որ ուսումնական աշխատանքի այս փուլում աշակերտները կարողանում են ամբողջ թեմայի կամ դասընթացի որևէ բաժնի ընդհանրացնող գծապատկերը կամ կառուցվածքի ու փոխկապակցվածության գծային մոդելը կազմել: Ասենք, ցույց տալ, թե «Գոյական», «Բայ», «Թվական» կամ «Նախադասություն» թեմաների բովանդակությունը, կառուցվածքը, բաղադրամասերի

կապն ու փոխակապակցությունն ինչպիսին են և ինչ պատկեր կունենան, եթե դրանք արտահայտելու լինենք գծերով, վանդակներով կամ շրջաններով:

## 4. «Մայրենի» առարկայի և «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի կապը

**Թատերական արվեստի տարրերի օգտագործումը մայրենիի դասաժամերին:** Արվեստի մյուս ձևերին զուգահեռ մայրենիի դասերին օգտագործվում են նաև թատերական արվեստի որոշ տարրեր, որոնք ոչ միայն նպաստում են ուսումնասիրվող նյութերի խորն ու բազմակողմանի յուրացմանը, այլև գաղափար են տալիս արվեստի այդ ձևի մասին, որը ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական տեսակետից կարևոր նշանակություն ունի:

Դեռևս առաջին դասարանից սկսած աշակերտներին գաղափար է տրվում դերերով ու խմբով կարդալու ձևերի մասին, և որոշակի աշխատանք է տարվում դրանց ուսուցման ուղղությամբ: Դերերով կարդալը, ըստ էության, թատերական արվեստի տարրերից ամենապարզն ու մատչելին է, որը մասսայական ձևով գործադրվում է բոլոր դասարաններում: Դերերով կարդալու ժամանակ աշակերտը մտնում է իրեն վստահված դերի մեջ, ավելի լավ է պատկերացնում իր կարդացածը և ձգտում է ձայնով, կարդալու եղանակով և այլ արտահայտչամիջոցներով ճիշտ վերարտադրել գործող տվյալ անձի հոգեվիճակը, թափանցել դերի էության մեջ, հասկանալ ու վերարտադրել այն: Իսկ սա մեծապես բարձրացնում է կարդալու որակական կողմը, այն դարձնում է գեղարվեստական, աշակերտներին ստիպում է կարդալու եղանակը, վերարտադրած խոսքը բովանդակությամբ ու ձևով համապատասխանեցնել խոսակցի, զուգահեռ դերը կատարողի խոսքի դրսևորման եղանակին:

Ուսումնասիրվող նյութի թատերականացման տարրերի օգտագործման ավելի բարդ ու հատկապես արդյունավետ ձև է առարկաների դերերով արտասանությունը: Անկասկած, այդ նպատակով կարելի է օգտագործել նաև սյուժետային բանաստեղծություններ, չափածո հեքիաթներ, նույնիսկ առանձին արձակ նյութեր, սակայն ամենից նպատակահարմարն առակներն են, որոնցում շարադրանքի ձևի փոփոխությունը, արագ զարգացող գործողությունը, գործող անձերի թվի շատությունը և այլ առանձնահատկություններ մեծապես նպաստում են նյութի

թատերականացմանը: Անգիր արված նյութը դերերով արտասանելիս աշակերտները մտովի մտնում են իրենց դերի մեջ, իրենց խոսքը, շարժումները, հարց ու պատասխանը համապատասխանեցնում են մյուսների խոսքին ու շարժումներին, նրանց հետ խոսելիս, առարկելիս, հարցնելիս ու պատասխանելիս դեմքով շրջվում են դեպի նրանք, իրենց խոսքին անհրաժեշտ երանգ են տալիս ու հաղորդակցվում, բարձրացնում կամ իջեցնում են ձայնի տոնը, արագացնում կամ դանդաղեցնում են խոսքի տեմպը: Սա, ըստ էության, արդեն յուրացված նյութի թատերականացված ներկայացում է՝ առանց համապատասխան միջավայրի, հագուստների և անհրաժեշտ այլ բաղադրիչների, որոնց առկայությունը պարտադիր է բեմականացման ժամանակ: Մեթոդական այս հնարի գործադրումը նպաստում է նյութի խորն ու բազմակողմանի յուրացմանը ինչպես բովանդակության՝ ճանաչողական ու դաստիարակչական տեսակետից, այնպես էլ, որ շատ ավելի կարևոր է, հուզական տեսակետից, որը խորապես ներգործում է երեխաների վրա, նրանց մեջ համապատասխան հույզեր ու ապրումներ է առաջացնում, հակում է ստեղծում դեպի թատրոնն ու թատերական արվեստը: Մայրենի լեզվի դասերին գործադրելի է նաև ուսումնասիրվող առանձին նյութերի բեմականացումը:

Դասագրքերում օգտագործված հեքիաթների ու պատմվածքների մի զգալի մասը նյութ են դարձել տիկնիկային ու պատանի հանդիսատեսի թատրոնների համար: Հաճախ երեխաներին կարելի է այդպիսի ներկայացումների տանել նաև կոնկրետ նյութերի ուսումնասիրությունից անկախ, և հետո դիտած ներկայացումը դասարանում քննարկման նյութ դարձնել ոչ միայն բովանդակության, այլև դերասանների խաղի, նրանց հագուստների, ներկայացման արտաքին ու երաժշտական ձևավորման տեսակետից: Այսպիսի քննարկումները շատ բան կտան երեխաներին թատերական արվեստը հասկանալու, արվեստի այդ ձևի հրաշալիքները և մարդկանց ապրումները, հույզերն ու մտորումները արտահայտելու մեծ հնարավորությունների մասին:

**Ճարտարապետական ու քանդակագործական արվեստի տարրերի օգտագործումը մայրենիի դասաժամերին:** Ճարտարապետության մեջ արտացոլվում է տվյալ ժողովրդի շինարարական վարպետությունը, կառուցելու դարավոր ձգտումը և նոր կառույցներ ստեղծելու երևակայությունն ու ընդունակությունը, որը անպայման պետք է հասցնել երեխաների գիտակցությանը:

Հայ ճարտարապետությունը հին ավանդներ ունի, և մեր հրաշալի եկեղեցիները, պահպանված փոքրաթիվ բերդերն ու հասարակական կառույցները դրա փայլուն վկայությունն են:

Այսօրվա մեր ճարտարապետները, որոնք հենվում են անցյալի հարուստ փորձի վրա և նոր ժամանակներին համապատասխան լուծումներ են տալիս ինչպես քաղաքաշինության, այնպես էլ առանձին նոր կառույցների ստեղծման մեջ, նույնպես պետք է անհրաժեշտ ուշադրության արժանանան, ճանաչվեն ու գնահատվեն, որպեսզի այսօրվա մեր նվաճումներն էլ հասնեն երեխաներին:

Երեխաներն ինքնուրույն կերպով այս ամենը դիտել, ճանաչել, ընկալել ու մարսել չեն կարող, ուսուցիչը պետք է այս գործում ևս հմուտ առաջնորդ լինի նրանց համար:

## 5. Միջառարկայական կապերի միջոցով հայրենասիրության ու բարոյական մյուս արժեքների ձևավորումը մայրենիի դասաժամերին

Աճող սերնդի դաստիարակության բաղադրամասերի ընդհանուր համակարգում վճռական դեր է կատարում բարոյական դաստիարակությունը:

Բարոյական դաստիարակությունը նպատակ ունի ձևավորելու ու զարգացնելու աշակերտների բարոյական գիտակցությունն ու համոզմունքները, բարոյական զգացմունքներն ու իդեալները, նրանց մեջ մշակելու ապագա կերտող քաղաքացուն հատուկ բարոյական վարքի անհրաժեշտ հմտություններ ու սովորություններ և այլն: Բարոյական դաստիարակության հիշատակված և այլ խնդիրների համակարգում շատ կարևոր է հայրենասիրության, ընկերասիրության, մարդասիրության, խղճի, պարտքի ու բարոյական մյուս զգացմունքների դաստիարակությունը:

Դպրոցականներին հայրենասիրության ոգով դաստիարակելուն մեծապես նպաստում են բազմաթիվ գործոններ, որոնց համակարգում առաջնակարգ դեր են կատարում հավասարապես ուսումնական բոլոր առարկաները:

Առաջնորդվելով դաստիարակող ուսուցման սկզբունքով (ուսուցանելիս միաժամանակ դաստիարակում ենք)՝ անխտիր բոլոր առարկաների ուսուցիչներն էլ լայն հնարավորություններ ունեն իրենց սաների մեջ հայրենասիրություն դաստիարակելու նպատակով արդյունավետ օգտագործելու ոչ միայն ուսուցանվող

ծրագրային նյութերը, այլև իրենց դասավանդած առարկայի գծով միջառարկայական բազմապիսի կապերը (հարակից կամ ոչ հարակից առարկաների միջև):

Կանգ առնենք «Մայրենի» առարկայի ընձեռած լայն հնարավորությունների վրա:

Հայրենասիրության դաստիարակության հզոր միջոց է մայրենի լեզուն, որը ոչ միայն ինտեգրված առարկայի բաղադրիչ է և ուսումնական առանձին առարկա, այլև մյուս առարկաների ավանդման հիմնական միջոց: Ուսումնական մյուս առարկաների հետ սերտ փոխկապակցությամբ մայրենի լեզվի կրթադաստիարակչական հսկայական դերը շատ լավ է բնութագրել Կ. Դ. Ուշինսկին «Մայրենի լեզու» ուշագրավ հոդվածում: «Մայրենի լեզվի մեջ,- գրում է նա,- շունչ ու ոգի են առնում ամբողջ ժողովուրդը, նրա ողջ հայրենիքը. նրա մեջ ժողովրդական ոգու ստեղծագործ ուժով մտքի, պատկերի և հնչյունի են փոխակերպվում հայրենիքի երկինքը, նրա օդը, ֆիզիկական երևույթները, նրա կլիման, նրա դաշտերը, լեռներն ու հովիտները, նրա անտառներն ու գետերը, նրա մրրիկներն ու ամպրոպները՝ հայրենի բնության այն ամբողջ խոր մտքերով ու զգացմունքներով լի ձայնը, որ բարբառում է այնպես բարձրագոչ՝ մարդու սիրո մասին դեպի իր հայրենիքը, սեր, որն այնպես հստակ է արտահայտվում մայրենի երգի մեջ, մայրենի եղանակներում, ժողովրդական բանաստեղծների շուրթերին: Սակայն ժողովրդական լեզվի պայծառ, վճիտ խորքերում արտահայտվում է ոչ միայն մայրենի երկրի բնությունը, այլև ժողովրդի հոգևոր կյանքի ամբողջ պատմությունը» [6, 127-128]:

Մայրենի լեզուն է, որ ամրակայում, սրբությամբ է պահում ու հաջորդ սերունդներին հանձնում տվյալ ժողովրդի հոգևոր կյանքի այդ ամբողջ պատմությունը, դրանով իսկ կատարում ազգապահպան ու հայրենասիրական իր վսեմ դերը:

Ազգապահպան ու հայրենասիրական նման վիթխարի դեր է կատարել նաև հայոց լեզուն: Շատ կարևոր է «Պատմություն» առարկայի հետ կապ ստեղծելով ցույց տալ, թե բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բառերով «ջարդարար ռիմակները» քանի՜-քանի՜ անգամ են «զարկված ու զրկված» «ողբի ու որբի հայրենիքի» պատճառ դարձել, բայց հայ ժողովուրդը միշտ էլ իր մեջ հոգու արիություն և կամքի մեծ ուժ է գտել և, սրբությամբ պաշտպանելով, պահպանել է հայրենիքը, մայրենի լեզուն, իսկ լեզվի միջոցով՝ իր բազմադարյան հարուստ մշակույթի գանձերը:

Մայրենի լեզուն անքակտելի կապերի մեջ է ամենից առաջ հայ գրականության հետ: Քանի որ գրականության հիմնական օբյեկտը հասարակական մարդն է՝ իր բազմաբովանդակ կյանքով, արարքներով, խոհերով ու զգացումներով, ապա մարդու կերպարը կազմում է գրական երկի հիմնական բաղադրամասը: Հենց գրական դրական հերոսների գեղեցիկ արարքներն են, որ ընդօրինակման առատ նյութ են տալիս մանուկ և պատանի ընթերցողներին: Հաճախ գրական հերոսն իր հայրենասիրական արարքներով ընթերցողի համար դառնում է բարոյական իդեալ՝ կատարելով յուրօրինակ դաստիարակի դեր:

Հայտնի է, որ մայրենի լեզվի դպրոցական ծրագրով նախատեսված գրական բազմաթիվ երկեր ունեն պատմական հենք: Էլ չենք խոսում «Սասունցի Դավիթ» անզուգական էպոսի և հայ ժողովրդական բանահյուսության այն հերոսապատում նմուշների մասին, որոնց ծանոթանում են դպրոցականները մայրենիի դասերին:

Ուսուցիչը հայրենասիրության դաստիարակման ժամանակ լայն հնարավորություններ ունի միջառարկայական կապեր ստեղծելու դպրոցում ավանդվող կերպարվեստի (ասենք՝ պատմական թեմայով նկարչական կտավների օգտագործում), երգ-երաժշտության (ասենք՝ հայրենիքին նվիրված ու հերոսապատում տեքստերով երգերին դիմելը) գծով:

Հայրենիքը ջերմորեն սիրելու համար պետք է ամենից առաջ այն լավ ճանաչել: Հայրենաճանաչության, ուստի և հայրենասիրության դաստիարակման գործում հսկայական դեր են կատարում աշխարհագրության հետ ստեղծված միջառարկայական կապերը: Առաջավոր ուսուցիչները լավ են իմանում, որ աշխարհագրական դիտողականությունը մեծապես նպաստում է հիշողության մեջ պատմական դեպքերի և իրադարձությունների ամրակայմանը, ուստի դասատվության ընթացքում նրանք հաճախակի են դիմում աշխարհագրության հետ ունեցած միջառարկայական կապերին:

Մարդ հայրենասիրական զգացումներով է տոգորվում ոչ միայն իր երկրի, իր ժողովրդի պատմության հերոսական դրվագներով, հայրենական գիտության, տեխնիկայի, մշակույթի և ժողովրդական տնտեսության բազմազան ճյուղերի նվաճումներով, այլև բուն իսկ հայրենի բնությամբ, բուսական ու կենդանական աշխարհով, գեղատեսիլ վայրերով: Այս առումով հայրենի բնությունը երեխայի համար

կատարում է յուրօրինակ դաստիարակի, այսպես ասած, անդիպլոմ մանկավարժի դեր: Բնության դաստիարակիչ դերի մասին նշել են դասական շատ մանկավարժներ՝ Կոմենսկին, Ռուսոն, Պեստալոցին, Դիստերվեգը, Աբովյանը, Ուշինսկին և ուրիշներ: Ռուս ականավոր մանկավարժ Ուշինսկին ասում է. «Իսկ մի՞թե բնությունը, ջուրը, բնության լայնարձակությունը, քաղաքի գեղատեսիլ շրջակայքը, բուրավետ հովիտներն ու ծփացող դաշտերը, վարդագույն գարունն ու ոսկեզօծ աշունը չեն եղել մեր դաստիարակները: Ինձ բարբարոս կոչեք մանկավարժության մեջ, բայց իմ կյանքի սովորություններից ես եկել եմ այն խոր համոզման, որ գեղեցիկ լանդշաֆտը մատաղ հոգու զարգացման գործում ունի դաստիարակչական այնպիսի հսկայական նշանակություն, որի հետ դժվար կմրցե մանկավարժի ազդեցությունը» [6,129]: Իհարկե, դրանով Ուշինսկին չի թերագնահատում մանկավարժի դերը, այլ ընդգծում է հայրենի բնության դաստիարակիչ ներգործության հզոր ուժը:

Միջառարկայական կապերի ընդհանուր համակարգում առաջատար դեր է կատարում բնությունը՝ բառիս ամենալայն իմաստով. չկա ուսումնական որևէ առարկա, որ անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված չլինի բնության հետ: Օրինակ, մայրենի լեզվի դասագրքերում լայն տեղ է տրված հայրենի բնաշխարհին նվիրված գրական նյութերին: Դրանով ուսուցիչը լայն հնարավորություններ է ստանում մայրենիի դասերին միջառարկայական բազմապիսի կապեր ստեղծելու և դպրոցականների մեջ սեր դաստիարակելու դեպի հայրենի բնությունը, բուսական և կենդանական աշխարհը:

Քանի որ այստեղ խոսքը հատկապես հայրենասիրական դաստիարակության մասին է, ապա հերքվում է մեթոդամանկավարժական երբեմնի այն պահանջը, որ հայրենասիրության դաստիարակության համար ուսուցչին մատնացույց էր արվում միայն «իր առարկայի նյութը»: Օրինակ, տարիներ առաջ տրվում էր այսպիսի միակողմանի հանձնարարական. «Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր աշակերտների մեջ հայրենասիրության զգացմունք դաստիարակի իր առարկայի նյութի հիման վրա» [6, 240]:

Միտումնավոր մեջբերվեց հնամենի այդ «մանկավարժական պատվիրանը», քանի որ այսօր էլ առանձին ուսուցիչներ դասատվության, դաստիարակչական աշխատանքի ընթացքում սահմանափակվում են միայն «իրենց առարկայի նյութի»

շրջանակներով: Մինչդեռ ուսումնադաստիարակչական աշխատանքներում ուսուցիչը պետք է լայնորեն դիմի նաև միջառարկայական կապերին. ներկա դեպքում յուրաքանչյուր ուսուցիչ իր սաների մեջ հայրենասիրության զգացմունք պետք է դաստիարակի ոչ միայն «իր առարկայի նյութի», այլ նաև միջառարկայական կապերի կենսագործման միջոցով, հարակից ու ոչ հարակից առարկաների նյութերի հիման վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով մայրենիի դասերին միջառարկայական կապերի դերը՝ եկանք հետևյալ եզրահանգումներին.

1. Միջառարկայական կապերով դասը պետք է ունենա ուսումնաճանաչողական հստակ ձևավորված խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ է տարբեր առարկաներից գիտելիքների ներգրավում:
2. Միջառարկայական կապերով դասի ընթացքում պետք է ապահովվի սովորողների բարձր ակտիվությունը ուրիշ առարկաներից ստացած գիտելիքներն ինքնուրույն կիրառելու և նոր խնդիրներ լուծելու համար:
3. Միջառարկայական կապերի իրականացումը պետք է ուղղված լինի պատճառահետևանքային կապերի և ուսումնասիրվող երևույթի էության բացահայտմանը:
4. Միջառարկայական կապերով դասը պետք է աշակերտների մեջ պետք է արթնացնի հետաքրքրություն՝ գիտակցելու տարբեր առարկաների գիտելիքների միջև կապերը:
5. «Մայրենի» առարկայի դասավանդման ժամանակ «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի առարկայախմբի հետ կապ ստեղծելով՝ հնարավոր է հասնել աշակերտների շրջանում նյութի առավել արդյունավետ յուրացմանը:
6. Միջառարկայական կապերի ստեղծումը բազմապիսի հնարավորություններ է ընձեռում սովորողի մեջ հայրենասիրության և բարոյական մյուս արժեքների ձևավորման համար:

## Գրականության ցանկ


1. Ավոյան Հ. Մ., Սարգսյան Ռ.Վ., Ուսուցման պրոցեսի կատարելագործման խնդիրները, Երևան, Լույս, 1981:
2. Կոմենսկի Յա. Ա., Մեծ դիդակտիկա, Երևան, Հայպետուսմանկ, 1962:
3. Մելքումյան Մ. Ս., Միջառարկայական կապերի պրոբլեմը և հայրենասիրության դաստիարակումը, Երևան, Լույս, 1975:
4. Շավարշյան Ա. Մ., Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, Հայպետուսմանկ, 1958:
5. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան, Լույս, 1986:
6. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1949: